

## **Հայոց Յեղասպանության ճանաչման եւ դատապարտման գործընթացը, հետեւանքների վերացման խնդիրները**

Հայոց Յեղասպանության ճանաչման եւ որոշ դեպքերում՝ դատապարտման գործընթացը արդեն տեղի է ունենում շուրջ հինգ տասնամյակ: Այդ ընթացքում, ավելի քան քսանհինգ պետություններ, մի շարք միջազգային քաղաքական եւ ոչքաղաքական կառույցներ, բազմաթիվ տեղական կամ նահանգային ինքնակառավարման մարմիններ ճանաչել են եւ որոշ դեպքերում՝ դատապարտել են Հայոց Յեղասպանությունը: Փաստ է, որ այն օրվանից ի վեր, երբ Հայաստանի Հանրապետությունը Հայոց Յեղասպանության միջազգային ճանաչումն ու դատապարտումը դարձրել է իր արտաքին քաղաքականության մասը՝ մեծացել է թիվը Հայոց Յեղասպանությունը ճանաչող պետությունների ու միջազգային կառույցների:

Այստեղ անհրաժեշտ է, որ մենք ճիշտ գնահատենք այս ճանաչումները: Նրանք, մեծավ մասամբ, չունեն իրավական արժեք, այլ՝ ունեն առավելաբար քաղաքական նշանակություն: Իսկ այդ քաղաքական քայլերի արժեքը ակամայից որոշել է հենց ինքը՝ Թուրքիան. ինչքան ուժեղ է հակադարձել նա այդ ճանաչումներին, այնքան բարձրացել է նրանց քաղաքական արժեքը: Իսկ Թուրքիան, գրեթե առանց բացառության, միշտ էլ ուժեղ հակադարձել է:

Ճանաչման այս գործընթացի գլխավոր նպատակներից մեկը եղել է դիմադրել Թուրքիայի ժխտողական քաղաքականությանը մեկ կողմից՝ արտասահմանում, մյուս կողմից՝ հենց Թուրքիայի ներսում: Թեև արտաքին ճակատում Թուրքիան, կարելի է ասել, տանուլ է տվել կռիվը, բայց նա շարունակում է ժխտողական քաղաքականությունը, որոշ փոփոխություններ կատարելով իր մարտավարության մեջ: Իսկ Թուրքիայի ներսում, այս գործընթացը ունեցել է իր անուրանալի ազդեցությունը, թեև որոշներ հակառակն են պնդում: Իրականությունն այն է, որ ճանաչման այս գործընթացը եղել է հիմնական, բայց՝ ոչ միակ խթանը, որ մղել է Թուրքիայի հասարակությանը վերատեսության ենթարկելու պետության պաշտոնական քաղաքականության քարոզածը: Գոյություն են ունեցել նաև այլ խթանող հանգամանքներ, սկսած՝ 1975-1985 թվականներին Թուրքիայի դեմ զինյալ գործողություններից, մինչև Թուրքիա-Եվրոմիություն մերձեցման գործընթացում ստեղծված ներքին եւ արտաքին հնարավորություններ՝ Եվրոխորհրդարանի 1987 թվականի բանաձևից մինչև՝ Թուրքիայի բնակչության տարբեր հատվածների ինքնության փնտրտուքի համատեքստում (պարունակին մեջ)՝ գիտաժողովներ, քննարկումներ, հրապարակումներ ու հրատարակություններ:

Թուրքիայում իրադրությունը հասել է նրան, որ 2014 թվականից սկսած, Ապրիլի 24-ի առիթով, Թուրքիայի այն ժամանակվա վարչապետն ու ներկայիս նախագահը մաղթում է, որ «20-րդ դարի սկզբին իրենց կյանքը կորցրած բոլոր հայերի հոգիները հանգչեն

խաղաղությամբ, իսկ նրանց թոռներին հայտնում է իր ցավակցությունը»: Թեև մեկ առիթով Թուրքիայի ղեկավարը խոսում է «տեղահանության» մասին, բայց «ցավակցությունը» այնպիսի ձևով է հայտնում, որ կարծեք հայերը բնական աղետի գոհ են գնացել, կամ՝ նույն ձևի կորուստներ են ունեցել նաև Թուրքիայի մյուս ժողովուրդները՝ թուրքեր, քրդեր, արաբներ եւ այլն: Բնականաբար, Թուրքիայի ղեկավարի այս հայտարարությունները չի կարելի համարել Հայոց ցեղասպանության ճանաչում Թուրքիայի կողմից. ընդհակառակը, այդ հայտարարությունները Ցեղասպանության ժխտման ավելի նուրբ մոտեցման դրսևորում են: Ժխտողական քաղաքականության այս նոր մարտավարության գլխավոր հատկանիշն ու նպատակը Թուրքիայի պատասխանատվությունից խուսափելն է: Առանց տուրք տալու Թուրքիայի այս նոր մարտավարությանը, պետք է արձանագրել, որ Թուրքիան այս մարտավարությունը որդեգրել է հարկադրաբար, փորձելով մեղմել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ճանապարհով իր վրա ավելացող ճնշումը:

Շուրջ երեք տասնյակ պետությունների եւ միջազգային կառույցների կողմից Հայոց Ցեղասպանության ճանաչումը պատճառ չէ, որ այլ պետությունների կողմից եւս ճանաչման ուղղությամբ աշխատանք պետք չէ տանել. ընդհակառակը, պետք է շարունակել այդ ուղղությամբ աշխատանքները, որովհետեւ, ինչպես ասվեց, այդ ճանաչումները տալիս են իրենց դրական ազդեցությունը՝ Թուրքիայում Ցեղասպանության ճանաչման գործընթացի վրա: Առավել, Թուրքիան փորձ է անում, որ մի շարք պետություններ կամ նույնիսկ տեղական ինքնակառավարման մարմիններ, ովքեր ճանաչել են Ցեղասպանությունը, փոխեն իրենց այդ կեցվածքը. պետք է ձախողության մատնել այս փորձերը եւս:

Ցեղասպանությունը ճանաչած պետություններում կամ նահանգային ու տեղական մարմիններում, անհրաժեշտ է առնել տրամաբանական հաջորդ քայլերը, որոնց շարքին՝ Հայոց Ցեղասպանության մասին ուսուցումը դարձնել կրթական ծրագրերի մաս, որպես համաշխարհային պատմությունում գրանցված մարդկության դեմ առաջին հանցագործություն:

Վերջին 10-15 տարիներին, հայերս փորձել ենք նաև, այնտեղ որտեղ կարելի է նման օրենքներ որդեգրել, Հայոց Ցեղասպանության ժխտումը դարձնել քրեորեն պատժելի արարք: Այս տարիների փորձը՝ Ֆրանսիայից, մինչև Բելգիա, մինչև Մարդու իրավունքների եվրոպական դատարան, հուշում է, որ անհրաժեշտ է այս դեպքում մենք մեր մոտեցումներում մտցնենք որոշ փոփոխություններ: Նախ պետք է ճշտենք, ճշգրտենք այն, թե ի՞նչն ենք ուզում քրեորեն պատժել, հայությունը բնաջնջելու պետական ծրագիրը եւ այդ ծրագրի գործադրության փորձը, թե՛ այդ ծրագրի ու փորձի որակումը որպես ցեղասպանություն: Հաշվի առնելով այլ նման դեպքերի ժխտման վերաբերյալ օրենքներն ու ՄԻԵԴ-ի ծանոթ որոշումը (Փերինչեք), կարծում եմ անհրաժեշտ է

նախապատվությունը տալ պետական ծրագիրը եւ փորձը ժխտող արարքներին, հատուկ ուշադրություն դարձնելով նաեւ հենց Թուրքիայում, Թուրքիայի իսկ օրենքների հիման վրա, ռազմական դատարաններում 1919-1920-ին տեղի ունեցած դատավարություններին: Այդ դատավարությունները, որոնք տեղի են ունեցել Ցեղասպանության գործադրության ընթացքում, հետեւաբար ունեն նաեւ թերություններ, հաստատում են պետության պատասխանատվությունը կատարվածի համար:

Թեւ Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը սկսվեց շուրջ 50 տարի առաջ՝ նաեւ որպէս նախապատրաստություն՝ հատուցման հարցը բարձրացնելու, հայությունը հավաքաբար ընդամենը մի քանի տարի առաջ սկսեց հատուցման ուղղությամբ աշխատանքների: Մինչ այդ, չհաշված Առաջին աշխարհամարտի ավարտին՝ 1919-ի Խաղաղության վեհաժողովին Հայաստանի Հանրապետության պատվիրակության կողմից ներկայացված հատուցման պահանջագիրը, հայկական տարբեր կազմակերպությունների կողմից Ցեղասպանության հատուցում ասելով ընդհանրապէս կամ նախ եւ առաջ հասկացվել է տարածքների վերադարձ: Զուգահեռաբար, եղել են անհատների կողմից ուսումնասիրություններ հատուցման չափի մասին:

2015 թվականի հունվարի 29-ին հրապարակված Համահայկական հռչակագիրը «Արտահայտում է Հայաստանի և հայ ժողովրդի միասնական կամքը՝ Հայոց ցեղասպանության փաստի համաշխարհային ճանաչման հասնելու և ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցում, ինչի համար մշակում է իրավական պահանջների թղթածրար՝ դիտելով այն անհատական, համայնքային և համազգային իրավունքների և օրինական շահերի վերականգնման գործընթացի մեկնարկ»:

ՀՀ կառավարության 2017-2022 թվականների ծրագիրը այս ուղղությամբ քաղաքական ուղեգիծ է ճշտում «Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը, դատապարտումը և ցեղասպանության հանցագործության կանխարգելումը», թեւ կառավարությունը ձեւավորած երկու կուսակցություններն էլ՝ ՀՀԿ-ն ու ՀՅԴ-ն, իրենց առանձին նախընտրական ծրագրերում խոսել են ավելիի մասին: ՀՀԿ-ի նախընտրական ծրագիրը ասում է. «Շարունակվելու են ջանքերը ցեղասպանության հանցագործությունների կանխարգելման ու դատապարտման, ինչպէս նաև դրանց հետևանքների վերացմանն առնչվող խնդիրները միջազգային հանրության օրակարգում պահելու համար»: Իսկ ՀՅԴ-ը նախընտրական ծրագիրը՝ «ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգի անքակտելի մաս դարձնել Հայոց ցեղասպանության ճանաչման և փոխհատուցման հարցերը»:

Առկա են տարբեր նախաձեռնություններ հատուցման խնդրի եւ ուսումնասիրություն կատարելու, եւ՝ ինչ-որ գործընթացներ սկսելու ուղղությամբ: Կենսական է դարձել, այդ ուղղությամբ բոլոր աշխատանքների համադրումը եւ կոնկրետ

քայլեր ձեռնարկելը: Պետք է արձանագրել, որ հատուցման հարցը միայն իրավական գործընթաց չի ենթադրում: Այն ունի նաև քաղաքական երես. քաղաքական եւ այլ աշխատանքներով անհրաժեշտ է հատուցման հարցը դարձնել միջազգային հանրության օրակարգի նյութ, սկսելով նրանից, թե ի՞նչ ենք հասկանում Թուրքիայի կողմից Ցեղասպանության ճանաչում ասելով: Այն կներառի նաև Թուրքիայի կողմից իր պատասխանատվության ճանաչում:

Հատուցման ուղղությամբ կարելուք քայլ կլինի, պետք է լինի, Հայաստանի Հանրապետության կողմից 2009 թվականի հոկտեմբերի 10-ի Հայաստան-Թուրքիա արձանագրություններից Հայաստանի ստորագրության հետ կանչելը, ինչպես նաև՝ 2019 թվականի մայիսի 28-ին, պետական մակարդակով նշումը 1919 թվականի մայիսի 28-ի՝ Միացյալ Հայաստանի հռչակման 100-ամյակի նշումը:

Ցեղասպանությունների կանխարգելման ամենաազդու միջոցը՝ Ցեղասպանություն գործած պետություններին համապատասխան պատիժի ենթարկելն է: Սա, նաև միջազգային հանրության պատասխանատվությունն է. իսկ միջազգային հանրության օրակարգին այն մաս դարձնելը՝ մեր՝ հայության պարտականությունն է:

**Կիրո Մանոյանի**

**ՀՅԴ Բյուրոյի անդամ, Հայ դատի եւ քաղաքական հարցերի գրասենյակի պատասխանատու**